

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի

«___» _____ 2018թ.

N ___ հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների ներկայացման մասին

1. Սույն մեթոդական ուղեցույցով (այսուհետ՝ Ուղեցույց) սահմանվում է <<Դատախազության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինների կողմից կոռուպցիոն բնույթի հանցագործությունների (ըստ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 19.01.2017թ. թիվ 3 հրամանի հավելվածով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկի) քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների ներկայացման կարգը:

2. Հայաստանի Հանրապետության նախաքննության մարմինները, Ուղեցույցի պահանջներին համապատասխան, յուրաքանչյուր տարի կազմում են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունների և վիճակագրական տվյալների մասին լրացված աղյուսակներ և տեղեկանք (ըստ Ուղեցույցին կից ներկայացվող հավելվածների):

Ուղեցույցին կից ներկայացված **2-րդ հավելվածի** աղյուսակները լրացվում են «Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների մասին վիճակագրական տվյալների աղյուսակների լրացման վերաբերյալ» կարգին համապատասխան (կցվում է):

3. Տեղեկանքում ներկայացվում են հաշվետու ժամանակահատվածում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ կազմված վիճակագրական աղյուսակներում ընդգրկված տվյալները՝ տեքստային տարբերակով:

4. Տեղեկանքում, բացի վերը նշված տեղեկություններից, ներկայացվում են նաև՝

ա) քրեական գործերի հարուցման առիթների վերաբերյալ վիճակագրական տվյալներ՝ ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի:

բ) քրեական հետապնդման ենթարկված պաշտոնատար անձանց (կասկածյալների և մեղադրյալների) գործունեության ոլորտները (առողջապահություն, կրթություն, իրավապահ, հարկային, մաքսային, պետական գնումների, սոցիալական ապահովության, էներգետիկայի և բնական պաշարների, դատական, տեղական ինքնակառավարման և այլն), պաշտոնները, այդ թվում՝ նշելով, թե նրանցից քանիսն է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն հանդիսանում բարձրաստիճան պաշտոնատար անձ և քանիսն է զբաղեցնում քաղաքական պաշտոն:

Վերոգրյալով պայմանավորված՝ ներկայացվում են յուրաքանչյուր ոլորտում քննության ընթացքում պարզված՝ հանցանքի կատարմանը նպաստող հանգամանքները, դրանց վերացման ուղղությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 200-րդ հոդվածի կարգով ձեռնարկված միջոցներն ու արդյունքները:

Միաժամանակ կարող են ներկայացվել քննության արդյունավետությանը խոչընդոտող իրավական, կազմակերպչական, կամ աշխատանքային այլ խնդիրներ:

5. Ուղեցույցի հիման վրա կազմված տեղեկանքը և վիճակագրական աղյուսակները, նախաքննության մարմնի ղեկավարի կողմից, յուրաքանչյուր տարի մինչև փետրվարի 1-ը ուղարկվում են ՀՀ գլխավոր դատախազություն: